

բնական է որ առաւելապէս մտռանին մէջ գործածուէր:

Պարզոտ: Անօթ մը դասական լեզուի մէջ (Երմ. ԾԲ, 19), միջին դարուն կը նշանակէր գինի կամ քացախ զտելու սպաս (Վաստ. 98,105,'15): Ամէն պարզուտ հաւասար չէր. առատ գինին կը քամէին «զամբիղով եւ չուխայով» (նոյն, 104), երկրորդն առաջնոյն մէջ դրած. իսկ սակաւը՝ «պարզուտին» մէջ աւազ դնելով (նոյն, 98,114), եւ որ քան միւսը փոքր կը թուի:

Զովլի: Պարզուտին մէկ տեսակն էր՝ ձարէ կամ երկաթեայ ցանցէ շինուած: Մզելու համար գինին՝ սպասս կը դնէին կարասին բերանը: Բայց երկար բուն մ'ալ ունենալու է, որով կ'իջեցնէին մինչեւ յատակն իսկ (նոյն, 93):

Դմբիլ: Այսպէս կոչուած (նոյն, 113, '25), եւ կամ «բերոց» (107) կամ «խառնիլ» (105), կը նշանակէր գաւազան մը՝ որով կը հարէին գինին՝ բարուքելու համար զայն, եւ ծայրը կապելով ըստ հաճոյս բուսոց խրճիկ մը՝ որ իւր համը գինւոյն կը հաղորդէր: Այս գործին դեռ կը մնայ Հայաստանի մէջ:

Դրգալ: Կը գործածուէր իբրեւ չափ՝ գինւոյ մէջ դեղեր ձգելու համար (նոյն,